թյուն ունի կամ մի շնչին առիթով պատրաստ է վեճի, նույնիսկ կռվի մտնելու կամ հայհոյանքի դիմելու։ Իրար կողքի հաշտ ապրելու պահանջը ուժեղանում էր։ Ամեն առիթից օգտվում էին խոռվածներին իրար հետ հաշտեցնելու համար, թե՛ հարսանիքին ներկա գտնված ժամանակ, թե՛ թաղման մասնակցելիս և թե՛ Մեծ պասի առաջին օրվա ընդհանուր հասարակական հացկերույթին։ Այս դեպքերում արյունակցական միասնության գիտակցությունը, որը հատուկ էր տոհմին, երբ պահանջվում էր, որ ազգականները իրար հետ հաշտ կենակցեն և թե՛ ներքուստ և թե՛ արտաքին հարաբերությունների մեջ ամուր պահեն իրենց միասնությունը, փոխվում էր համայնական խաղաղ կենակցության և թաղային ու համագյուղացիական տերիտորիալ միասնության պահանջին։

Ընտանեկան խմբակցությունների մանրացման հետ շաղկապված և նրանից որոշ չափով անկախ, ավելի արագ և ժամանակով ավելի վաղ ընթանում էր համայնքի կազմակերպչական կառուցվածքի ձևափոխությունը։ Մեր ուսումնասիրության միջոցին այդ կառուցվածքն արդեն բոլորովին այլաձևվել էր սովետական շինարարության և գլխավորապես կոլտնտեսային տնտեսության իրացման հետևանքով։ Վերջնականապես թոթափված էին միջնադարյան համայնական ձևերի վերապրուկները։ Սակայն արդեն նախահեղափոխական վերջին չորս տասնամյակներում Զանգեզուրի գյուղացիական համայնքը սկսել էր արդեն վերակառուցվել ռուսական գյուղացիական օրենսդրության ազդեցության տակ և շեղվել նախորդ պատմական ավանդական ձևերից։

Զանգեզուրի գյուղացիական համայնքը խանական և մելիքական կառավարության ներքո պահպանելիս է եղել իր միջնադարյան նախատիպի որոշ առանձնահատկությունները։ Գոյություն չուներ գյուղապետի կանոնավոր ընտրություն։ Պահպանված բանավոր տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ քöխվայությունը մի քանի գյուղերում անցնում էր ժառանգաբար, միևնույն ընտանիքի մեջ հորից որդուն կամ ավագ եղբորը, սակայն ոչ ամեն տեղ։ Ավելի տարածված էր այն ձևը, երբ քöխվան նշանակվում էր մելիքի կամ կալվածատիրոջ կողմից, թեև գերազանցորեն, բայց ոչ պարտադրաբար միևնույն ընտանիքից և քöխվան պատասխանատու էր նրա առաջ, նա անձնական կապեր էր հաստատում նրա հետ և կախում ուներ բացառապես նրանից։ Համայնքի կողմից վերահսկողությունը և առհասարակ քöխվայի գործառնություններին միջամտությունը ստացած չէր որևէ իրավական ձև և ինչքան էլ հասարակական փոխհարաբերությունները պահպանելիս լինեին իրենց նահապետական բնույթը, այնուամենայնիվ քöխվայի իրավասությունը դրված չէր որոշ սահմանների մեջ։ Նա ենթակա էր քմահաճույքի, առավելապես այն ժամանակվա հասարակական պարագաներում, երբ համայնքը ծանրաբեռնված էր խճճված պարտականություններով, որոնք բարդացնում էին քöխվայի պատասխանատվությունը և՛ հողատիրոջ, և՛ մահալական մելիքի, և՛ կենտրոնական իշխանության[13] նկատմամբ։ Թե ինչքան բարդ էին այդ պարտականությունները, դրա մասին ցայտուն գաղափար կարելի է կազմել Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի կատարած ցուցակագրությունից։ 1823 թ., օրինակ՝ մելիքապատկան Տաթև գյուղը տալիս էր որպես պետության հասանելիք տուրք հետևյալ գումարները, պաշարեղենն ու իրերը՝[14]

«Հարկ է վճարում՝ դրամով 88 չերվոնեց.

---

[13] Խանի և 1823-ից հետո պրովինցիայի կառավարչի։

[14] «Описание Карабахской провинции». Магал-Татевский.